Հավելված N 1
ՀՀ կառավարության 2018 թվականի
հունիսի 8-ի N 666 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԵՏԱՂԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված ընդերքօգտագործողների և պետական մարմինների կողմից հաշվետվությունները կազմելու և ներկայացնելու հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև հաշվետվության մեջ ներառվող տեղեկատվության կազմի հետ կապված հարաբերությունները:

II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

2. Սույն հավելվածում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

1) հրապարակային հաշվետվություն՝ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 9-րդ հոդվածով նախատեսված ընդերքօգտագործողների և պետական մարմինների կողմից ներկայացվող հաշվետվությունը, որը բաց է հրապարակման համար.

2) համակարգ՝ www.eiti.am կայքի միջոցով էլեկտրոնային եղանակով հաշվետվություն-ների ներկայացումն ապահովող համակարգ.

3) համակարգը վարող՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի պատվերով ծառայություն մատուցող կազմակերպություն (այսուհետ՝ անկախ ադմինիստրատոր).

4) օգտվող՝ համակարգի շահագործման, դրանից օգտվելու և հաշվետվություն ներկայացնելու թույլտվություն ունեցող անձ, որն ունի էլեկտրոնային ստորագրություն.

5) անկախ ադմինիստրատոր՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի պատվերով Հայաստանի Հանրապետության արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության ազգային զեկույցի կազմման աշխատանքներն իրականացնող աուդիտորական կազմակերպություն:

III. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

3. Հրապարակային հաշվետվությունները ձևավորվում են արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով: Էլեկտրոնային համակարգը հասանելի է www.eiti.am կայքէջին կից գործող reports.eiti.am հասցեում:

4. Հրապարակային հաշվետվություն ներկայացնող պետական մարմնի կամ ընդերքօգտագործողի պաշտոնատար անձը համակարգի օգտվող դառնալու համար գրանցվում է համակարգում:

5. Հրապարակային հաշվետվություն ներկայացնող պետական մարմիններն են՝

1) տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը.

2) բնապահպանության նախարարությունը.

3) պետական եկամուտների կոմիտեն:

6. Պետական մարմնի պաշտոնատար անձը գրանցվելու համար մուտքագրում է հրապարակային հաշվետվությունն էլեկտրոնային եղանակով ստորագրելու լիազորություն ունեցող անձի (անձանց) անունը, ազգանունը, պաշտոնը, հանրային ծառայությունների համարանիշը, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը և ուղարկում է օգտվող դառնալու հայտը:

7. Ընդերքօգտագործողի պաշտոնատար անձը գրանցվելու համար մուտքագրում է կազմակերպության անվանումը հայերենով և անգլերենով, կազմակերպության հարկ վճարողի հաշվառման համարը, գրանցման հասցեն, գործունեության հասցեն, հրապարակային հաշվետվությունն էլեկտրոնային եղանակով ստորագրելու լիազորություն ունեցող անձի (անձանց) անունը, ազգանունը, պաշտոնը, հանրային ծառայությունների համարանիշը, էլեկտրոնային փոստի հասցեն, հեռախոսահամարը և ուղարկում է օգտվող դառնալու հայտը:

8. Սույն կարգի 6-րդ և 7-րդ կետերով սահմանված տեղեկատվությունն ստուգվում է համակարգը վարողի կողմից և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաստատվում կամ մերժվում է հայտը՝ հայտում նշված էլեկտրոնային հասցեին ուղարկելով մերժման մասին պարզաբանում:

9. Հաշվետվությունը լրացնելու նպատակով օգտվողն առցանց եղանակով համակարգ է մուտք գործում օգտվողի մուտքանունի և գաղտնաբառի միջոցով:

10. Հաշվետվություն ներկայացնելու համար օգտվողները գրանցվում են ոչ ուշ, քան տվյալ տարվա հունիսի 30-ը:

11. Համակարգից օգտվողներն են հանդիսանում՝

1) սույն հավելվածի 5-րդ կետով հաստատված պետական կառավարման մարմինների ղեկավարները և (կամ) տեղակալը.

2) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործող ընկերության ղեկավարը կամ գլխավոր հաշվապահը:

12. Սույն հավելվածի 11-րդ կետում նշված օգտվողները ներկայացնում են հրապարակային հաշվետվությունները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 666 - Ն որոշման NN 2, 3, 4 և 5 հավելվածների ձևերի:

13. Մնանկ ճանաչված կազմակերպությունն ազատվում է հաշվետվություն ներկայացնելու պարտավորությունից:

IV. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

14. Օգտվողի՝ համապատասխան տարեթվի ընտրությամբ «պատրաստել հաշվետվություն» հրահանգի հիման վրա համակարգն ինքնաշխատ եղանակով ձևավորում է համապատասխան էլեկտրոնային փաստաթուղթ, որին տրվում է անհատական համար:

15. Համակարգում լրացված հաշվետվությունը ներկայացնելուց առաջ օգտվողը դնում է իր էլեկտրոնային ստորագրությունը և ուղարկում է հաշվետվությունը:

16. Օգտվողն իր էլեկտրոնային ստորագրությամբ հավաստում է, որ հրապարակային հաշվետվությամբ ներկայացված տվյալները ճշգրիտ են և հավաստի:

17. Հաշվետվությունը համարվում է ընդունված, երբ այն հաջողությամբ անցնում է էլեկտրոնային ստորագրության վավերականության ստուգումը:

18. Հաշվետվությունը ներկայացնելուց հետո առավելագույնը մեկամսյա ժամկետում համակարգը վարողն ստուգում է ներկայացված հաշվետվությունը և թերությունների հայտնաբերման դեպքում հետ է ուղարկում հաշվետվությունն օգտվողին 5 աշխատանքային օրվա ընթացքում թերությունների վերացման նպատակով՝ դրա մասին ծանուցում ուղարկելով օգտվողի էլեկտրոնային փոստի հասցեին:

19. Օգտվողը 5 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ստորագրությամբ ներկայացնում է ճշգրտված հաշվետվություն կամ պարզաբանում ճշգրտում չկատարելու վերաբերյալ:

20. Համակարգը վարողը 2018 թվականի մարտի 21-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-191-Ն օրենքով սահմանված ժամկետներում ներկայացված հրապարակային հաշվետվությունները հաստատում է հրապարակային հաշվետվությունները ներկայացնելու վերջնաժամկետից հետո առավելագույնը 2-ամսյա ժամկետում: Հաստատումից հետո 1-օրյա ժամկետում հաստատման մասին ծանուցումն ուղարկվում է օգտվողի էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ հաստատված հրապարակային հաշվետվությունները դառնում են հասանելի reports.eiti.am կայքում:

21. Սահմանված ժամկետից ուշ ներկայացված հաշվետվությունը հաստատվում է համակարգը վարողի կողմից, եթե այն ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետից հետո մեկամսյա ժամկետում:

22. Այն դեպքում, երբ անկախ ադմինիստրատորի կողմից ավարտվել են ազգային զեկույցի կազմման աշխատանքները, օգտվողի կողմից՝ սահմանված ժամկետից ուշ ներկայացված հաշվետվությունը չի հաստատվում համակարգը վարողի կողմից և դառնում է հասանելի reports.eiti.am կայքում՝ չհաստատված լինելու մասին նշումով:

23. Էլեկտրոնային համակարգի միջոցով հաշվետվությունները ներկայացնելու անհնարինության դեպքում հաշվետվությունը ներկայացնելու վերջնաժամկետից առնվազն 3 օր առաջ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կայքում հրապարակվում է տեղեկատվություն էլեկտրոնային համակարգի խափանման մասին: Այս դեպքում հրապակային հաշվետվություն ներկայացնողն օրենքով սահմանված ժամկետում հաշվետվությունը ներկայացնում է թղթային եղանակով՝ համապատասխան

պետական մարմնի կամ ընդերքօգտագործող ընկերության ղեկավարի ստորագրությամբ հավաստելով, որ հրապարակային հաշվետվությամբ ներկայացված տվյալները ճշգրիտ են և հավաստի:

24. Հրապարակային հաշվետվությունները թղթային եղանակով ուղարկելու դեպքում համապատասխան պետական մարմինը կամ ընդերքօգտագործողը զուգահեռաբար «էքսելս» («xls») ձևաչափով (առանց ստորագրության, չլուսածրված) հաշվետվությունն ուղարկում է eiti@gov.am էլեկտրոնային հասցեին:

V. ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԻՑ ՀԵՏՈ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

25. Թերությունների հայտնաբերման կամ հաշվետվության մեջ ճշգրտում կատարելու անհրաժեշտության դեպքում համակարգը վարողը հաշվետվությունն օգտվողի կողմից ներկայացվելուց հետո մեկամսյա ժամկետում հաշվետվության ճշգրտման մասին ծանուցում է ուղարկում օգտվողի էլեկտրոնային փոստի հասցեին:

26. Ճշգրտված հաշվետվությունը կամ հաշվետվությունում առկա թերության վերաբերյալ պարզաբանումը ներկայացնելուց առաջ օգտվողը դնում է իր էլեկտրոնային ստորագրությունը: Հաշվետվությունը համարվում է ընդունված, երբ համակարգն ստուգում և հաստատում է էլեկտրոնային ստորագրության վավերականությունը:

27. Օգտվողի կողմից ստորագրված և ներկայացված բոլոր հաշվետվությունները, ճշգրտված հաշվետվությունները և պարզաբանումներն առանց դրանցում փոփոխություններ կատարելու հնարավորության պահպանվում են համակարգում առանձին փաստաթղթերի տեսքով («պդֆ» («pdf») ձևաչափով), իսկ համակարգի շտեմարանում հրապարակվում են միայն համակարգը վարողի կողմից հաստատված հրապարակային հաշվետվությունները:

28. Հաշվետվության ընդունման, ճշգրտված հաշվետվության կամ պարզաբանում ներկայացնելու և հաշվետվության հաստատման մասին ծանուցումներն ուղարկվում են օգտվողի էլեկտրոնային փոստի հասցեին ծանուցման և օգտվողի համար համակարգում դրանք տեսանելի եղանակով ցուցադրելու միջոցով:

VI. ԱՆԿԱԽ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏՈՐԸ

29. Անկախ ադմինիստրատորը Հայաստանի Հանրապետության արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության ազգային զեկույցի կազմման ընթացքում կարող է համակարգի միջոցով կամ իր էլեկտրոնային փոստի հասցեից հարցումներ ուղարկել օգտվողի էլեկտրոնային փոստի հասցեին:

30. Օգտվողը պատասխանում է անկախ ադմինիստրատորի հարցումներին՝ հարցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2018 թվականի
հունիսի 8-ի N 666 - Ն որոշման

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

Ձև N1

I. Հրապարակային հաշվետվություն ներկայացնող ընդերքօգտագործողը, արտադրությունը, ներքին իրացումը, արտահանումը և զբաղվածությունը

Հարկ վճարողի անվանումը (հայերեն)	
Հարկ վճարողի անվանումը (անգլերեն)	
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն)	
Ընդերքօգտագործման թույլտվության համարը (համարները)	
Հարկ վճարողի գրանցման հասցեն	
Հարկ վճարողի գործունեության հասցեն (հասցեները)	
Հանքավայրի անվանումը	
Հանքավայրի գտնվելու մարզը (մարզերը)	

Կազմակերպությունում իրականացվե՞լ է արտաքին ֆինանսական աուդիտ հաշվետու տարվա համար	
Աուդիտի հաշվետվության և եզրակացության հրապարակման հղումը	

(դրամ)

Արտադրություն (ըստ արտադրատեսակների)	Չափի միավորը	Ծավալը	Ընդամենը՝ արժեքը	Նշումներ

(դրամ)

Արտադրության իրացումը ներքին շուկայում (ըստ արտադրատեսակների)	Չափի միավորը	Ծավալը	Ընդամենը՝ իրացման արժեքը	Գնորդը		Նշումներ
				կազմակերպության անվանումը	իրացման ծավալը	

(դրամ)

Արտահանում (ըստ արտադրատեսակների)	Ծածկագիրը	Չափի միավորը	Ծավալը	Ընդամենը՝ իրացման արժեքը	Արտահանման երկրները	Նշումներ

Զբաղվածների թիվը		Անժամկետ	Ժամկետային	Նշումներ
որից՝	տղամարդ			
	կին			
որից՝	ՀՀ քաղաքացի			
	օտարերկրյա քաղաքացի			

Ձև N 2

II. Ընդերքօգտագործողի կողմից վճարված հարկերը, վճարները և տուրքերը

(դրամ)

ԿՖՎ 2001 ծածկագիրը	Հարկեր և վճարներ	Հաշվետու տարվա համար հարկային հաշվարկով (հայտարարագրով) հաշվարկված	Ստուգման ակտով (ակտերով) (ուսումնասիրության արձանագրությամբ) հաշվարկված (առանց տույժերի և տուգանքների)	Ստուգման ակտի (ակտերի) (ուսումնասիրության արձանագրության) ամսաթիվը (ամսաթվերը)	Ստուգման ակտի (ակտերի) (ուսումնասիրության արձանագրության) համարը (համարները)	Հաշվետու տարում վճարված (առանց տույժերի և տուգանքների)	Հաշվետու տարում հաշվանցված	Հաշվետու տարում վերադարձված	Նշումներ
1112 711200	Շահութահարկ								
1111 711100	Եկամտային հարկ								
1141 714110	Ավելացված արժեքի հարկ								
1142 714200	Ակցիզային հարկ								
1146 714612	Ռոյալթի								
	1-ին բաղադրիչ								
	2-րդ բաղադրիչ								

1146 714612	Բնօգտագործման վճարներ								
1145 714523	Բնապահպանական վճարներ (հարկեր) ըստ հաշվարկ-հաշվետվությունների								
1145 714523	ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծված ապրանք-ների համար գանձված բնապահպանական վճարներ (հարկեր)՝ ըստ ներկայացված մաքսային հայտա-րարագրերի								
1145 714523	ԵԱՏՄ երկրներից ներմուծված ապրանք-ների համար գանձված բնապահպանական վճարներ (հարկեր)՝ ըստ ներկայացված ներմուծման հարկային հայտարարագրերի								
1151 715100, 1422 742212, 1145 714511	Մաքսատուրք, մաքսավճար, մաքսային մարմինների կողմից գանձվող ճանապարհային հարկ (վճար)	x	x	x	x				

(դրամ)

ԿՖՎ 2001 ծածկագիրը	Տուրքեր	Թույլտվության համարը	Տուրքի դրույքաչափը	Տուրքի հաշվարկված գումարը	Ստուգման ակտով (ակտերով) (ուսումնասիրության արձանագրությամբ) հաշվարկված	Ստուգման ակտի (ակտերի) (ուսումնասիրության արձանագրության) ամսաթիվը (ամսաթվերը)	Ստուգման ակտի (ակտերի) (ուսումնասիրության արձանագրության) համարը (համարները)	Հաշվետու տարում վճարված գումարը (առանց տույժերի և տուգանքների)	Նշումներ
1145 714522	Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք								
1145 714522	Ձրօգտագործման թույլտվության տրամադրման պետա-կան տուրք								

(դրամ)

Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում	Թույլտվության համարը	Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար	Դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար	Նշումներ

(դրամ)

Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից հատկացումներ ընկերությանը	Թույլտվության համարը	Հատկացված գումարը	Նշումներ

(դրամ)

Մշտադիտարկումների իրականացման վճար	Թույլտվության համարը	Հաշվարկման բազային չափը	Վճարման ենթակա գումարի մեծությունը հաշվետու տարվա համար	Հաշվետու տարում վճարված	Նշումներ

(դրամ)

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության իրականացման վճար	Թույլտվության համարը	Նախագծի անվանումը	Վճարված գումարը	Նշումներ

Ձև N 3

III. Ընդերքօգտագործողի կողմից վճարված տեղական հարկերը և վճարները

(դրամ)

ԿՖՎ 2001 ծածկագիրը	Հարկի տեսակը	Հաշվետու տարվա համար հարկային հաշվարկով հաշվարկված	Ստուգման ակտով (ակտերով) (ուսումնասիրու-թյան արձանագրու-թյամբ) հաշվարկված (առանց տույժի և տուգանքի)	Հաշվետու տարում վճարված (առանց տույժի և տուգանքի)	Գերավճարի կամ ապառքի մնացորդը հաշվետու տարվա վերջի դրությամբ	Համայնքի անվանումը խոշորացումից առաջ	Համայնքի անվանումը խոշորացումից հետո	Նշումներ
1131 713121, 1136 713611	Գույքահարկ							
1131 713122	Հողի հարկ							

(դրամ)

Հողի ձեռքբերում	Աճուրդի նախավճարը	Պայմանագրով սահմանված արժեքը	Հաշվետու տարում վճարված	Գերավճարի կամ ապառքի մնացորդը հաշվետու տարվա վերջի դրությամբ	Համայնքի անվանումը խոշորացումից առաջ	Համայնքի անվանումը խոշորացումից հետո	Նշումներ
Հողի ձեռքբերում							
Հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերության վճարում	x	x					

(դրամ)

ԿՖՎ 2001 ծածկագիրը	Վարձակալության վճարներ	Վարձակալության օբյեկտը	Հաշվետու տարում վճարված (առանց տույժի և տուգանքի)	Համայնքի անվանումը խոշորացումից առաջ	Համայնքի անվանումը խոշորացումից հետո	Նշումներ
1415 741520		անշարժ գույք				
		փոխադրամիջոց				
		հողամաս				

Ձև N 4

IV. Ընդերքօգտագործողի կողմից վճարված տույժերն ու տուգանքները

(դրամ)

ԿՖՎ 2001 ծածկագիրը	Տույժեր և տուգանքներ	Ինչ իրավախախտման համար է նշանակվել տույժը կամ տուգանքը	Հաշվարկված տույժի և տուգանքի գումարը (ներառյալ տվյալ տարում ստուգման ակտով (ուսումնասիրության արձանագրության) հաշվարկված)	Ստուգման ակտի (ուսումնասիրության արձանագրության) ամսաթիվը	Ստուգման ակտի (ուսումնասիրության արձանագրության) համարը	Հաշվետու տարում վճարված	Ում է վճարվել (պետական)		Ում է վճարվել (տեղական ինքնակառավարման մարմիններ)				Նշումներ
							ՀՀ պետական բյուջե	արտաբյուջետային հաշիվ	համայնքի բյուջե	համայնքի արտաբյուջետային հաշիվ	համայնքի անվանումը խոշորացումից առաջ	համայնքի անվանումը խոշորացումից հետո	
1431 743120, 1161 716122	Տույժեր												
1431 743120, 1161 716122	Տուգանքներ												

Ձև N 5

V. Ընդերքօգտագործողի սոցիալ-տնտեսական ներդրումը համայնքին

(դրամ)

Սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունները և բարեգործական հատկացումները համայնքին	Թույլտվության համարը	Պարտավորության (ներդրման) անվանումը	Ներդրման չափը	Որից՝		Ոչ ֆինանսական		Համայնքի անվանումը խոշորացումից առաջ	Համայնքի անվանումը խոշորացումից հետո	Նշումներ
				համայնքի բյուջե	համայնքի արտաբյուջե-տային հաշիվ	ապրանքը կամ ծառայու-թյունը (ծրագիրը)	արժեքային գնահատականը			
Հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններ						x	x			
						x	x			
			x	x	x					
			x	x	x					
Ընդերքօգտագործողի կողմից համայնքին կատարված բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումներ						x	x			
						x	x			
			x	x	x					
			x	x	x					

Ձև N 6

VI. Ընդերքօգտագործողի կողմից ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվությունները, նվիրաբերությունները կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները

(դրամ)

Ոչ առևտրային իրավաբանական անձանց տրամադրված նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումներ (ըստ կազմակերպությունների)	Ստացող կազմակերպության անվանումը	Վճարված գումարը	Ոչ ֆինանսական		Նշումներ
			ապրանքը կամ ծառայությունը	արժեքային գնահատականը	

(դրամ)

Ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումներ (ընդհանուր գումարը և ֆիզիկական անձանց թիվը)	Ֆիզիկական անձանց թիվը	Վճարված գումարը	Ոչ ֆինանսական		Նշումներ
			ապրանքը կամ ծառայությունը	արժեքային գնահատականը	
			x	x	
		x			

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Հրապարակային հաշվետվության՝ արտադրության, ներքին իրացման, արտահանման և զբաղվածության մասը (ձև N 1) լրացվում է հետևյալ կերպ՝

1) «Ընդերքօգտագործման թույլտվության համարը» տողում ընդերքօգտագործողը լրացնում է օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության համարը (թույլտվությունների համարները).

2) ընդերքօգտագործողը կատարում է գրառում կազմակերպությունում հաշվետու տարվա համար արտաքին ֆինանսական աուդիտ իրականացված լինելու վերաբերյալ և իրականացված լինելու դեպքում տրամադրում է աուդիտի հաշվետվության և եզրակացության հրապարակման հղումը.

3) «Արտադրություն (ըստ արտադրատեսակների)» տողում լրացվում են՝

ա. հաշվետու տարում ընդերքօգտագործողի կողմից արտադրված վերջնական արտադրանքների անվանումները,

բ. չափի միավորները,

գ. հաշվետու տարում արտադրության ծավալը,

դ. հաշվետու տարում արտադրված տվյալ արտադրատեսակի ընդամենը արժեքը, որն արտադրատեսակի մեկ միավորի միջին կշռված ինքնարժեքի և արտադրատեսակի արտադրության ծավալի արտադրյալն է,

ե. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում հաշվետու տարում համապատասխան տողի վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ.

4) «Արտադրության իրացումը ներքին շուկայում (ըստ արտադրատեսակների)» տողում լրացվում են՝

ա. ընդերքօգտագործողի կողմից արտադրված վերջնական արտադրանքների անվանումները,

բ. չափի միավորը,

գ. հաշվետու տարում Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց արտադրատեսակի իրացման ընդամենը ծավալը,

դ. հաշվետու տարում ընդամենն իրացման արժեքը, որն արտադրատեսակի միավորի իրացման միջին կշռված գնի և իրացման ծավալի արտադրյալն է,

ե. գնորդ իրավաբանական անձի անվանումը,

զ. տվյալ գնորդ իրավաբանական անձին իրացված արտադրատեսակի ծավալը,

է. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում հաշվետու տարում համապատասխան տողի վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ.

5) «Արտահանում (ըստ արտադրատեսակների)» տողում լրացվում են՝

ա. հաշվետու տարում ընդերքօգտագործողի կողմից արտահանված վերջնական արտադրանքների անվանումները,

բ. ծածկագրերը՝ ըստ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ),

գ. չափի միավորը,

դ. հաշվետու տարում արտահանման ծավալը,

ե. հաշվետու տարում տվյալ արտադրատեսակի ընդամենն իրացման արժեքը, որը տարվա ընթացքում արտահանված արտադրատեսակի մաքսային հայտարարագրում նշված մաքսային արժեքների հանրագումարն է,

զ. նշվում է արտահանման նշանակման երկրների ցանկը՝ ըստ արտադրատեսակի,

է. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում հաշվետու տարում համապատասխան տողի վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ.

6) «Զբաղվածների թիվը» տողում լրացվում են՝

ա. հաշվետու տարում ընդերքօգտագործողի անժամկետ և ժամկետային աշխատողների թիվը,

բ. կին և տղամարդ աշխատողների թիվը,

գ. Հայաստանի Հանրապետության քաղաքացի և օտարերկրյա քաղաքացի աշխատողների թիվը: Քաղաքացիություն չունեցող աշխատողների թիվը գումարվում է օտարերկրյա քաղաքացի աշխատողների թվին՝ «Նշումներ» դաշտում կատարելով գրառում նրանց թվի վերաբերյալ,

դ. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում հաշվետու տարում համապատասխան տողի մասին ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

2. Հրապարակային հաշվետվության՝ «Ընդերքօգտագործողի կողմից վճարված հարկերը, վճարները և տուրքերը» մասը (ձև N 2) լրացվում է հետևյալ կերպ՝

1) «Շահութահարկ», «Եկամտային հարկ», «Ավելացված արժեքի հարկ», «Ակցիզային հարկ» տողերում լրացվում են՝

ա. հաշվետու տարվա համար հաշվարկված գումարը՝ իսկ «Ավելացված արժեքի հարկ» և «Ակցիզային հարկ» տողերում ներառվում են նաև մաքսային մարմինների կողմից հաշվարկված գումարները,

բ. հաշվետու տարում ստուգման ակտով (ակտերով) (ուսումնասիրության արձանագրությամբ) արձանագրված (առաջադրված) ընդամենը գումարը՝ առանց տույժերի և տուգանքների,

գ. ստուգման ակտի (ակտերի) (ուսումնասիրության արձանագրության) համարը, ամսաթիվը (համարները, ամսաթվերը),

դ. հաշվետու տարում ընդամենը վճարված հարկի գումարը՝ առանց տույժերի և տուգանքների,

ե. հարկատեսակին կամ վճարին (հարկատեսակից կամ վճարից) հարկային մարմնի կողմից հաշվետու տարում ընդամենը հաշվանցված գումարը: Տվյալ հարկատեսակի կամ վճարի հաշվից այլ հարկատեսակի կամ վճարի հաշվին հաշվանցում կատարելու դեպքում պետք է գումարը լրացնել բացասական մեծությամբ («-» նշանով), իսկ այլ հարկատեսակի կամ վճարի հաշվից տվյալ հարկատեսակի կամ վճարի հաշվին հաշվանցված գումարը՝ դրական մեծությամբ («+» նշանով),

զ. հաշվետու տարում տվյալ հարկատեսակի կամ վճարի գծով հարկատուին վերադարձված գումարը,

է. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում տվյալ հարկի վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ.

2) Ռոյալթի տողում լրացվում են՝

ա. հաշվետու տարվա համար հաշվարկված գումարը,

բ. հաշվետու տարում ստուգման ակտով (ակտերով) (ուսումնասիրության արձանագրությամբ) արձանագրված (առաջադրված) ընդամենը գումարը՝ առանց տույժերի և տուգանքների,

գ. ստուգման ակտի (ակտերի) (ուսումնասիրության արձանագրության) համարը, ամսաթիվը (համարները, ամսաթվերը),

դ. հաշվետու տարում ընդամենը վճարված ռոյալթիի գումարը՝ առանց տույժերի և տուգանքների,

ե. հարկատեսակին կամ վճարին (հարկատեսակից կամ վճարից) հարկային մարմնի կողմից հաշվետու տարում ընդամենը հաշվանցված գումարը: Տվյալ հարկատեսակի կամ վճարի հաշվից այլ հարկատեսակի կամ վճարի հաշվին հաշվանցում կատարելու դեպքում պետք է գումարը լրացնել բացասական մեծությամբ («-» նշանով), իսկ այլ հարկատեսակի կամ վճարի հաշվից տվյալ հարկատեսակի կամ վճարի հաշվին հաշվանցված գումարը՝ դրական մեծությամբ («+» նշանով),

զ. հաշվետու տարում տվյալ հարկատեսակի կամ վճարի գծով հարկատուին վերադարձված գումարը,

է. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում տվյալ վճարի մասին ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ.

3) 1-ին բաղադրիչ տողում լրացվում են՝

ա. հաշվետու տարվա համար ռոյալթիի դրույքաչափի բանաձևի «4» դրույքաչափով հաշվարկված վճարի գումարը,

բ. հաշվետու տարում ռոյալթիի դրույքաչափի բանաձևի «4» դրույքաչափով ընդամենը վճարված վճարի գումարը.

4) 2-րդ բաղադրիչ տողում լրացվում են՝

ա. հաշվետու տարվա համար ռոյալթիի դրույքաչափի բանաձևի «[Շ/(Հx8)]x100» դրույքաչափով հաշվարկված վճարի գումարը,

բ. հաշվետու տարում ռոյալթիի դրույքաչափի բանաձևի «[Շ/(Հx8)]x100» դրույքաչափով ընդամենը վճարված վճարի գումարը.

5) բնօգտագործման վճարների և բնապահպանական վճարների (հարկերի) տողերում լրացվում են՝

ա. հաշվետու տարվա համար հարկի կամ վճարի յուրաքանչյուր տեսակի համար հաշվարկված գումարը՝ ըստ հաշվետու տարվա համար ներկայացված հարկային հաշվարկի

(ճշգրտված հաշվարկի), ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծումների մասով՝ մաքսային հայտարարագրի, իսկ ԵԱՏՄ երկրներից ներմուծումների մասով՝ հարկային հայտարարագրի,

բ. հաշվետու տարում ստուգման ակտով (ակտերով) (ուսումնասիրության արձանագրությամբ) արձանագրված (առաջադրված) ընդամենը գումարը՝ առանց տույժերի և տուգանքների,

գ. ստուգման ակտի (ակտերի) (ուսումնասիրության արձանագրության) համարը, ամսաթիվը (համարները, ամսաթվերը),

դ. հաշվետու տարում վճարված հարկի կամ վճարի ընդամենը գումարը՝ առանց տույժերի և տուգանքների,

ե. հարկատեսակին կամ վճարին (հարկատեսակից կամ վճարից) հարկային մարմնի կողմից հաշվետու տարում ընդամենը հաշվանցված գումարը: Տվյալ հարկատեսակի կամ վճարի հաշվից այլ հարկատեսակի կամ վճարի հաշվին հաշվանցում կատարելու դեպքում պետք է գումարը լրացնել բացասական մեծությամբ («-» նշանով), իսկ այլ հարկատեսակի կամ վճարի հաշվից տվյալ հարկատեսակի կամ վճարի հաշվին հաշվանցված գումարը՝ դրական մեծությամբ («+» նշանով),

զ. հաշվետու տարում տվյալ հարկատեսակի կամ վճարի գծով հարկատուին վերադարձված գումարը,

է. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում հաշվետու տարում համապատասխանաբար բնօգտագտագործման վճարի և բնապահպանական հարկի տեսակների, ինչպես նաև տվյալ վճարի կամ հարկի վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ.

6) «Մաքսատուրք, մաքսավճար, մաքսային մարմինների կողմից գանձվող ճանապարհային հարկ (վճար)» տողում լրացվում են՝

ա. հաշվետու տարում մաքսային մարմիններին ըստ մաքսային հայտարարագրերի հաշվարկված և վճարված մաքսատուրքերի, մաքսավճարների և ճանապարհային հարկի (վճարների) ընդամենը գումարը,

բ. հաշվետու տարում ընդամենը հաշվանցված գումարը,

գ. հաշվետու տարում հարկատուին վերադարձված գումարը,

դ. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում հաշվետու տարում ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ.

7) «Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք» և «Ջրօգտագործման թույլտվության տրամադրման պետական տուրք» տողերում ըստ ընդերքօգտագործման թույլտվությունների լրացվում են՝

ա. ընդերքօգտագործման թույլտվության համարը,

բ. տուրքի դրույքաչափը,

գ. հաշվետու տարվա համար տուրքի հաշվարկված գումարը,

դ. հաշվետու տարում ստուգման ակտով (ակտերով) (ուսումնասիրության արձանագրությամբ) արձանագրված (առաջադրված) ընդամենը գումարը,

ե. ստուգման ակտի (ակտերի) (ուսումնասիրության արձանագրության) համարը, ամսաթիվը (համարները, ամսաթվերը),

զ. հաշվետու տարում ընդամենը վճարված տուրքի գումարը՝ առանց տույժերի և տուգանքների,

է. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում տվյալ տուրքի մասին ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

8) «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում» տողում լրացվում են՝

ա. ընդերքօգտագործման թույլտվության համարը,

բ. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի հաշվարկման բազային չափը,

գ. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար,

դ. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար,

ե. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում դրամագլխի մասին ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ.

9) «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից հատկացումներ ընկերությանը» տողում լրացվում են՝

ա. ընդերքօգտագործման թույլտվության համարը,

բ. հաշվետու տարում ընկերությանը բնապահպանության նախարարության կողմից վճարված գումարը,

գ. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում դրամագլխից վճարման վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ.

10) «Մշտադիտարկումների իրականացման վճար» տողում լրացվում են՝

ա. ընդերքօգտագործման թույլտվության համարը,

բ. մշտադիտարկումների իրականացման վճարի հաշվարկման բազային չափը,

գ. մշտադիտարկումների իրականացման վճար հաշվարկված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար,

դ. մշտադիտարկումների իրականացման վճարի փաստացի վճարված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար,

ե. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում վճարի վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ.

11) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության (այսուհետ՝ ՇՄԱԳՓ) իրականացման վճար» տողում լրացվում են՝

ա. ընդերքօգտագործման թույլտվության համարը,

բ. նախագծի անվանումը, որի համար իրականացվել է ՇՄԱԳՓ,

գ. հաշվետու տարվա ընթացքում ՇՄԱԳՓ-ի իրականացման համար վճարված գումարը,

դ. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում ՇՄԱԳՓ-ի իրականացման վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

3. Հրապարակային հաշվետվության՝ «Ընդերքօգտագործողի կողմից վճարված տեղական հարկերը և վճարները» մասը (ձև N 3) լրացվում է հետևյալ կերպ՝

1) ընդերքօգտագործողի կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին վճարված գույքահարկը և հողի հարկը ներկայացվում է ըստ համայնքների: «Գույքահարկ» և «Հողի հարկ» տողերում լրացվում են՝

ա. հաշվետու տարվա համար հաշվարկված գումարը,

բ. հաշվետու տարում ստուգման ակտով (ակտերով) (ուսումնասիրության արձանագրությամբ) արձանագրված (առաջադրված) ընդամենը գումարը՝ առանց տույժերի և տուգանքների,

գ. հաշվետու տարում ընդամենը վճարված գումարը՝ առանց տույժերի և տուգանքների,

դ. գերավճարի կամ ապառքի մնացորդը հաշվետու տարվա վերջի դրությամբ,

ե. համայնքի (բնակավայրի) անվանումը համայնքների խոշորացումից առաջ, եթե իրականացվել է համայնքների խոշորացում,

զ. համայնքի անվանումը համայնքների խոշորացումից հետո, իսկ եթե համայնքի խոշորացում չի իրականացվել, երկու դաշտում էլ լրացվում է համայնքի նույն անվանումը,

է. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում տվյալ հարկի մասին ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ.

2) «Հողի ձեռքբերում» տողում լրացվում են՝ ըստ յուրաքանչյուր հողամասի՝

ա. համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդով ձեռք բերված լինելու դեպքում աճուրդի նախավճարը,

բ. պայմանագրով սահմանված ձեռքբերման արժեքը,

գ. հաշվետու տարում ընդամենը վճարված գումարը,

դ. հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերության վճարված գումարը,

ե. գերավճարի կամ ապառքի մնացորդը՝ հաշվետու տարվա վերջի դրությամբ,

զ. համայնքի անվանումը (անվանումները) համայնքների խոշորացումից առաջ, եթե իրականացվել է համայնքների խոշորացում,

է. համայնքի անվանումը համայնքների խոշորացումից հետո, իսկ եթե համայնքի խոշորացում չի իրականացվել, երկու դաշտում էլ լրացվում է համայնքի նույն անվանումը,

ը. «Նշումներ» դաշտում համայնքը կատարում է գրառում տվյալ վճարի վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ.

3) տեղական ինքնակառավարման մարմիններին (համայնքներին) վճարված վարձակալության վճարները ներկայացվում են ըստ համայնքների: «Վարձակալության վճարները» տողում լրացվում են՝

ա. վարձակալության օբյեկտը (անշարժ գույք, փոխադրամիջոցը և (կամ) հողամաս),

բ. հաշվետու տարում ընդամենը վճարված վարձակալության վճարի գումարը՝ առանց տույժերի և տուգանքների,

գ. համայնքի (բնակավայրի) անվանումը համայնքների խոշորացումից առաջ,

դ. համայնքի անվանումը համայնքների խոշորացումից հետո, իսկ եթե համայնքի խոշորացում չի իրականացվել, երկու դաշտում էլ լրացվում է համայնքի նույն անվանումը,

ե. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում վարձակալության վճարների վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

4. Հրապարակային հաշվետվության՝ «Ընդերքօգտագործողի կողմից վճարված տույժերն ու տուգանքները» մասը (ձև N 4) լրացվում է հետևյալ կերպ՝

1) «Տույժեր» և «Տուգանքներ» տողերում լրացվում են ընդերքօգտագործողների կողմից հրապարակային հաշվետվությունում ներառված հարկերի և վճարների վճարման պարտավորությունները չկատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն լիազոր մարմինների կողմից նշանակված տույժերն ու տուգանքները: «Տույժեր» և «Տուգանքներ» տողերում լրացվում են՝

ա. իրավախախտման անվանումը, որի համար նշանակվել է տույժը և (կամ) տուգանքը,

բ. հաշվարկված տույժի և տուգանքի գումարը՝ ներառյալ տվյալ տարում ստուգման ակտով (ուսումնասիրության արձանագրությամբ) հաշվարկվածը,

գ. ստուգման ակտի (ուսումնասիրության արձանագրության) համարը և ամսաթիվը, եթե տույժը և (կամ) տուգանքը նշանակվել է ստուգման ակտով,

դ. հաշվետու տարում վճարված գումարը,

ե. համապատասխան հաշվի համարը (Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, արտաբյուջետային հաշիվներ, համայնքի բյուջե, համայնքի արտաբյուջետային հաշիվներ),

զ. համայնքի անվանումը խոշորացումից առաջ և հետո,

է. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում տույժերի և տուգանքների վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

5. Հրապարակային հաշվետվության՝ «Ընդերքօգտագործողի սոցիալ-տնտեսական ներդրումը համայնքին» մասը (ձև N 5) լրացվում է հետևյալ կերպ՝

1) ընդերքօգտագործողի կողմից սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունները և բարեգործական հատկացումները ներկայացվում են ըստ համայնքների.

2) «Հանքարդյունահանման պայմանագրով սահմանված՝ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններ» և «Ընդերքօգտագործողի կողմից համայնքին կատարված բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումներ» տողերում լրացվում են՝

ա. օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության համարը (թույլտվություն-ների համարները),

բ. պարտավորության (ներդրման) անվանումը,

գ. դրամային արտահայտությամբ ներդրման դեպքում՝ հաշվետու տարում ներդրված գումարը,

դ. նշում, թե որտեղ է կատարվել վճարումը (համայնքի բյուջեի կամ համայնքի արտաբյուջետային հաշիվ),

ե. ոչ ֆինանսական ներդրման դեպքում՝ ապրանքի և (կամ) ծառայության անվանումը,

զ. ապրանքի և (կամ) ծառայության ինքնարժեքը,

է. համայնքի անվանումը համայնքների խոշորացումից առաջ,

ը. համայնքի անվանումը համայնքների խոշորացումից հետո, իսկ եթե համայնքի խոշորացում չի իրականացվել, երկու դաշտում էլ լրացվում է համայնքի նույն անվանումը,

թ. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում ցանկացած էական տեղեկատվության, ինչպես նաև կատարված ներդրումների մասին հրապարակային աղբյուրների վերաբերյալ:

6. Հաշվետվությանը կից՝ ընդերքօգտագործողը կարող է ներկայացնել կամ համակարգում վերբեռնել նաև ներդրման մասին վկայող փաստաթղթեր:

7. Հրապարակային հաշվետվության՝ ընդերքօգտագործողի կողմից ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվությունների, նվիրաբերությունների կամ այլ ձևով կատարված անհատույց օտարման մասը (ձև N 6) լրացվում է հետևյալ կերպ՝

1) ընդերքօգտագործողի կողմից ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվությունները, նվիրաբերությունները կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումները ներկայացվում են՝ ըստ ստացող կազմակերպության.

2) «Ոչ առևտրային իրավաբանական անձանց տրամադրված նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումներ» տողում լրացվում են՝

ա. ստացող կազմակերպության անվանումը,

բ. հաշվետու տարում վճարված գումարը,

գ. ոչ ֆինանսական ներդրման դեպքում՝ ապրանքի և (կամ) ծառայության անվանումը,

դ. ապրանքի և (կամ) ծառայության ինքնարժեքը,

ե. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ.

3) «Ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվություններ, նվիրաբերություններ կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումներ» տողում լրացվում են՝

ա. ստացող ֆիզիկական անձանց թիվը (բացառելով այլ տողերում ներառված ֆիզիկական անձանց),

բ. հաշվետու տարում վճարված ընդամենը գումարը,

գ. ոչ ֆինանսական ներդրման դեպքում՝ ապրանքի և (կամ) ծառայության անվանումը,

դ. ապրանքի և (կամ) ծառայության ինքնարժեքը,

ե. «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2018 թվականի
հունիսի 8-ի N 666- Ն որոշման

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

(դրամ)

Արտահանումը (ըստ արտադրատեսակների)	Ծածկագիրը	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն)	Չափի միավորը	Ծավալը	Ընդամենը՝ իրացման արժեքը	Արտահանման երկրները	Նշումներ

Հարկ վճարողի անվանումը (հայերեն)	
Հարկ վճարողի անվանումը (անգլերեն)	
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն)	

(դրամ)

ԿՖՎ 2001 ծածկագիրը	Հարկեր և վճարներ	Հաշվետու տարվա համար հարկային հաշվարկով (հայտարարագրով) հաշվարկված	Հարկային հաշվարկը (ճշգրտված հաշվարկի) ներկայացնելու ամսաթիվը (ամսաթվերը)	Ստուգման ակտով (ակտերով) (ուսումնասիրության արձանագրությամբ) հաշվարկված (առանց տույժերի և տուգանքների)	Ստուգման ակտի (ակտերի) (ուսումնասիրության արձանագրության) ամսաթիվը (ամսաթվերը)	Ստուգման ակտի (ակտերի) (ուսումնասիրության արձանագրության) համարը (համարները)	Հաշվետու տարում վճարված (առանց տույժերի և տուգանքների)	Հաշվետու տարում հաշվանցված	Հաշվետու տարում վերադարձված	Նշումներ
1112 711200	Շահութահարկ									
1111 711100	Եկամտային հարկ									
1141 714110	Ավելացված արժեքի հարկ									

1142 714200	Ակցիզային հարկ									
1146 714612	Ռոյալթի									
1146 714612	Բնօգտագործման վճարներ									
1145 714523	Բնապահպանական վճարներ (հարկեր)՝ ըստ հաշվարկ-հաշվետվությունների									
1145 714523	ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից ներմուծված ապրանքների համար գանձված բնապահպանական վճարներ (հարկեր)՝ ըստ ներկայացված մաքսային հայտարարագրերի									

1145 714523	ԵԱՏՄ երկրներից ներմուծված ապրանքների համար գանձված բնապահպանական վճարներ (հարկեր)՝ ըստ ներկայացված ներմուծման հարկային հայտարարագրերի									
1151 715100, 1422 742212, 1145 714511	Մաքսատուրք, մաքսավճար, մաքսային մարմինների կողմից գանձվող ճանապարհային հարկ (վճար)	x	x	x	x	x				

(դրամ)

ԿՖՎ 2001 ծածկա-գիրը	Տուրքեր	Թույլտվության համարը	Տուրքի դրույքաչափը	Տուրքի հաշվարկված գումարը	Հաշվետու տարում վճարված գումարը (առանց տույժերի և տուգանքների)	Նշումներ
1145 714522	Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք					
1145 714522	Ձրօգտագործման թույլտվության տրամադրման պետական տուրք					

(դրամ)

ԿՖՎ 2001 ծածկա-գիրը	Տույժեր և տուգանքներ	Ինչ իրավախախտման համար է նշա-նակվել տույժը կամ տուգանքը	Հաշվարկված տույժի և տուգանքի գումարը (ներառյալ տվյալ տարում ստուգման ակտով (ուսումնասիրության արձանագրությամբ) հաշվարկված)	Ստուգման ակտի (ուսումնասիրության արձանագրության) ամսաթիվը	Ստուգման ակտի (ուսումնասիրության արձանագրության) համարը	Հաշվետու տարում վճարված	Նշումներ
1431 743110	Տույժեր						
1431 743110	Տուգանքներ						

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Պետական եկամուտների կոմիտեն յուրաքանչյուր ընդերքօգտագործողի համար «Արտահանում (ըստ արտադրատեսակների)» տողում լրացնում է՝

1) հաշվետու տարում ընդերքօգտագործողի կողմից արտահանված վերջնական արտադրանքների անվանումները.

2) ծածկագրերը՝ ըստ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ).

3) ընդերքօգտագործողի՝ հարկ վճարողի անվանումը.

4) հարկ վճարողի հաշվառման համարը.

5) արտադրանքի չափի միավորը.

6) հաշվետու տարում արտահանման ծավալը.

7) հաշվետու տարում տվյալ արտադրատեսակի ընդամենը իրացման արժեքը, որը տարվա ընթացքում արտահանված արտադրատեսակի մաքսային հայտարարագրում նշված մաքսային արժեքների հանրագումարն է.

8) թվարկվում է նշանակման երկրների ցանկը՝ ըստ արտադրատեսակի.

9) «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում հաշվետու տարում համապատասխան տողի մասին ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

2. «Շահութահարկ», «Եկամտային հարկ», «Ավելացված արժեքի հարկ», «Ակցիզային հարկ» և «Ռոյալթի» տողերում լրացվում են՝

1) հաշվետու տարվա համար հաշվարկված գումարը՝ ըստ հաշվետու տարվա համար ներկայացված յուրաքանչյուր հարկային հաշվարկի (ճշգրտված հաշվարկի): «Ավելացված արժեքի հարկ» և «Ակցիզային հարկ» տողերում ներառվում են նաև մաքսային մարմինների կողմից հաշվարկված գումարները.

2) հաշվետու տարվա համար ներկայացված յուրաքանչյուր հարկային հաշվարկը (ճշգրտված հաշվարկի) ներկայացնելու ամսաթիվը.

3) հաշվետու տարում ստուգման ակտով (ակտերով) (ուսումնասիրության արձանագրությամբ) արձանագրված (առաջադրված) ընդամենը գումարը՝ առանց տույժերի և տուգանքների.

4) յուրաքանչյուր ստուգման ակտի (ուսումնասիրության արձանագրության) համարը, ամսաթիվը.

5) հարկային և մաքսային մարմիններին հաշվետու տարում վճարված յուրաքանչյուր հարկատեսակի ընդամենը գումարը՝ առանց տույժերի և տուգանքների.

6) հարկատեսակին կամ վճարին (հարկատեսակից կամ վճարից) հարկային մարմնի կողմից հաշվետու տարում ընդամենը հաշվանցված գումարը: Տվյալ հարկատեսակի կամ վճարի հաշվից այլ հարկատեսակի կամ վճարի հաշվին հաշվանցում կատարելու դեպքում պետք է գումարը լրացնել բացասական մեծությամբ («-» նշանով), իսկ այլ հարկատեսակի կամ վճարի հաշվից տվյալ հարկատեսակի կամ վճարի հաշվին հաշվանցված գումարը՝ դրական մեծությամբ («+» նշանով).

7) հաշվետու տարում տվյալ հարկատեսակի կամ վճարի գծով հարկատուին վերադարձված գումարը.

8) «Նշումներ» դաշտում կոմիտեն կատարում է գրառում տվյալ հարկատեսակի կամ վճարի մասին ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

3. Բնօգտագործման վճարներ և բնապահպանական վճարներ (հարկեր) տողերում լրացվում են՝

1) հաշվետու տարվա համար հարկի կամ վճարի յուրաքանչյուր տեսակի համար հաշվարկված գումարը՝ ըստ հաշվետու տարվա համար ներկայացված յուրաքանչյուր հարկային հաշվարկի (ճշգրտված հաշվարկի), ԵԱՏՄ անդամ չհամարվող երկրներից

ներմուծումների մասով՝ մաքսային հայտարարագրի, իսկ ԵԱՏՄ երկրներից ներմուծումների մասով՝ հարկային հայտարարագրի.

2) հաշվետու տարվա համար ներկայացված յուրաքանչյուր հարկային հաշվարկը (ճշգրտված հաշվարկի) ներկայացնելու ամսաթիվը.

3) հաշվետու տարում ստուգման ակտով (ակտերով) (ուսումնասիրության արձանագրությամբ) արձանագրված (առաջադրված) ընդամենը գումարը՝ առանց տույժերի և տուգանքների.

4) յուրաքանչյուր ստուգման ակտի (ուսումնասիրության արձանագրության) համարը, ամսաթիվը.

5) հաշվետու տարում վճարված հարկի կամ վճարի ընդամենը գումարը՝ առանց տույժերի և տուգանքների.

6) հարկատեսակին կամ վճարին (հարկատեսակից կամ վճարից) հարկային մարմնի կողմից հաշվետու տարում ընդամենը հաշվանցված գումարը: Տվյալ հարկատեսակի կամ վճարի հաշվից այլ հարկատեսակի կամ վճարի հաշվին հաշվանցում կատարելու դեպքում պետք է գումարը լրացնել բացասական մեծությամբ («-» նշանով), իսկ այլ հարկատեսակի կամ վճարի հաշվից տվյալ հարկատեսակի կամ վճարի հաշվին հաշվանցված գումարը՝ դրական մեծությամբ («+» նշանով).

7) հաշվետու տարում տվյալ հարկատեսակի կամ վճարի գծով հարկատուին վերադարձված գումարը.

8) նշումներ դաշտում կոմիտեն կատարում է գրառում տվյալ հարկատեսակի կամ վճարի մասին ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

4. «Մաքսատուրք, մաքսավճար, մաքսային մարմինների կողմից գանձվող ճանապարհային հարկ (վճար)» տողում լրացվում են՝

1) հաշվետու տարում մաքսային մարմիններին ըստ մաքսային հայտարարագրերի հաշվարկված և վճարված մաքսատուրքերի, մաքսավճարների և ճանապարհային հարկի (վճարների) ընդամենը գումարը.

2) հաշվետու տարում ընդամենը հաշվանցված գումարը.

3) հաշվետու տարում հարկատուին վերադարձված գումարը.

4) «Նշումներ» դաշտում կոմիտեն կատարում է գրառում ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

5. «Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրք» և «Ջրօգտագործման թույլտվության տրամադրման պետական տուրք» տողերում լրացվում են՝

1) ընդերքօգտագործողի համապատասխան թույլտվության համարը.

2) պետական տուրքի դրույքաչափը.

3) պետական տուրքի՝ հաշվետու տարվա համար հաշվարկված գումարը.

4) համապատասխան գանձապետական հաշվին հաշվետու տարում վճարված տուրքի գումարը՝ առանց տույժերի և տուգանքների.

5) «Նշումներ» դաշտում կոմիտեն կատարում է գրառում տվյալ տուրքի մասին ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

6. «Տույժեր» և «տուգանքներ» տողերում լրացվում են ընդերքօգտագործողի կողմից հրապարակային հաշվետվությունում ներառված հարկերի և վճարների վճարման պարտավորությունները չկատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն լիազոր մարմինների կողմից նշանակված տույժերն ու տուգանքները: «Տույժեր» և «Տուգանքներ» տողերում լրացվում են՝

1) իրավախախտման անվանումը, որի համար նշանակվել է տույժը և (կամ) տուգանքը.

2) հաշվետու տարում հաշվարկված տույժը և (կամ) տուգանքը.

3) ստուգման ակտի (ուսումնասիրության արձանագրության) համարը և ամսաթիվը, եթե տույժը և (կամ) տուգանքն առաջադրվել է ստուգման ակտով.

4) հաշվետու տարում վճարված տույժի և (կամ) տուգանքի գումարները.

5) «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում տույժերի և տուգանքների վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2018 թվականի
հունիսի 8-ի N 666 - Ն որոշման

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

Հարկ վճարողի անվանումը (հայերեն)	
Հարկ վճարողի անվանումը (անգլերեն)	

(դրամ)

Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում	Թույլտվության համարը	Հաշվարկման բազային չափը	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը հաշվարկված մեծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	Դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը վճարված մեծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար	Դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար	Նշումներ

(դրամ)

Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից հատկացումներ ընկերությանը	Թույլտվության համարը	Հատկացված գումարը	Վճարման ամսաթիվը (յուրաքանչյուր վճարման դեպքում)	Նշումներ

(դրամ)

Մշտադիտարկումների իրականացման վճար	Թույլտվության համարը	Հաշվարկման բազային չափը	Վճարման ենթակա գումարի ընդամենը վճարված մեծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ	Վճարման ենթակա գումարի մեծությունը հաշվետու տարվա համար	Հաշվետու տարում վճարված	Նշումներ

(դրամ)

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության իրականացման վճար	Թույլտվության համարը	Նախագծի անվանումը	Հաշվետու տարում վճարված գումարը	Նշումներ

(դրամ)

Տույժեր և տուգանքներ	Թույլտվության համարը	Ինչ իրավախախտման համար է նշանակվել տույժը կամ տուգանքը	Հաշվարկված տույժի և տուգանքի գումարը (ներառյալ տվյալ տարում ստուգման ակտով (ուսումնասիրության արձանագրությամբ) հաշվարկված)	Ստուգման ակտի (ուսումնասիրության արձանագրության) ամսաթիվը	Ստուգման ակտի (ուսումնասիրության արձանագրության) համարը	Հաշվետու տարում վճարված	Հաշվի համարը	Նշումներ
Տույժեր								
Տուգանքներ								

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. «Հարկ վճարողի անվանումը» տողերում լրացվում է ընդերքօգտագործող հարկ վճարողի անունը՝ հայերենով և անգլերենով:

2. «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում» տողում լրացվում են՝

1) ընդերքօգտագործման թույլտվության համարը.

2) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի հաշվարկման բազային չափը.

3) դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը հաշվարկված մեծությունը՝ հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ.

4) դրամագլխին հատկացման ենթակա գումարի ընդամենը վճարված մեծությունը՝ հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ.

5) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը՝ հաշվետու տարվա համար.

6) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման փաստացի վճարված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար.

7) «Նշումներ» դաշտում կատարվում է գրառում դրամագլխի վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

3. «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից հատկացումներ ընկերությանը» տողում լրացվում են՝

1) ընդերքօգտագործման թույլտվության համարը.

2) հաշվետու տարում բնապահպանության նախարարության կողմից ընդերքօգտագործողին հատկացված գումարը.

3) յուրաքանչյուր վճարման ամսաթիվը.

4) «Նշումներ» դաշտում կատարվում է գրառում դրամագլխից վճարման վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

4. «Մշտադիտարկումների իրականացման վճար» տողում լրացվում են՝

1) ընդերքօգտագործման թույլտվության համարը.

2) մշտադիտարկումների իրականացման վճարի հաշվարկման բազային չափը.

3) մշտադիտարկումների իրականացման վճարի վճարման ենթակա գումարի ընդամենը վճարված մեծությունը՝ հաշվետու տարվան նախորդող տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ.

4) մշտադիտարկումների իրականացման վճար՝ հաշվարկված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար.

5) մշտադիտարկումների իրականացման վճարի փաստացի վճարված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար.

6) «Նշումներ» դաշտում կատարվում է գրառում վճարի վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

5. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության (այսուհետ՝ ՇՄԱԳՓ) իրականացման վճար» տողում լրացվում են՝

1) ընդերքօգտագործման թույլտվության համարը.

2) նախագծի անվանումը, որի համար իրականացվել է ՇՄԱԳՓ.

3) հաշվետու տարվա ընթացքում ՇՄԱԳՓ-ի իրականացման համար վճարված գումարը.

4) «Նշումներ» դաշտում կատարվում է գրառում ՇՄԱԳՓ-ի իրականացման վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

6. «Տույժեր և տուգանքներ» տողերում լրացվում են՝

1) ընդերքօգտագործման թույլտվության համարը.

2) իրավախախտման անվանումը, որի համար նշանակվել է տույժը և (կամ) տուգանքը.

3) հաշվետու տարում հաշվարկված տույժը և (կամ) տուգանքը.

4) ստուգման ակտի (ուսումնասիրության արձանագրության) համարը և ամսաթիվը, եթե տույժը և (կամ) տուգանքը նշանակվել է ստուգման ակտով.

5) համապատասխան հաշիվներին հաշվետու տարում տույժի և (կամ) տուգանքի վճարված գումարը.

6) հաշվի համարը.

7) «Նշումներ» դաշտում ընդերքօգտագործողը կատարում է գրառում տույժերի և տուգանքների վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2018 թվականի
հունիսի 8-ի N 666 - Ն որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ
ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

Հարկ վճարողի անվանումը (հայերեն)	
Հարկ վճարողի անվանումը (անգլերեն)	

(դրամ)

ԿՖՎ 2001 ծածկագիրը	Հարկի տեսակը	Հաշվետու տարվա համար հարկային հաշվարկով հաշվարկված	Կիսամյակների համար հարկային հաշվարկը (ճշգրտված հաշվարկի) ներկայացնելու ամսաթիվը	Ստուգման ակտով (ակտերով) (ուսումնասիրության արձանագրությամբ) հաշվարկված (առանց տույժերի և տուգանքների)	Հաշվետու տարում վճարված (առանց տույժերի և տուգանքների)	Գերավճարի կամ ապառքի մնացորդը հաշվետու տարվա վերջի դրությամբ	Համայնքի անվանումը խոշորացումից առաջ	Համայնքի անվանումը խոշորացումից հետո	Նշումներ
1131 713121, 1136 713611	Գույքահարկ								
1131 713122	Հողի հարկ								

(դրամ)

ԿՖՎ 2001 ծածկա-գիրը	Վարձակալության վճարներ	Վարձակալության օբյեկտը	Հաշվետու տարում վճարված (առանց տույժերի և տուգանքների)	Համայնքի անվանումը խոշորացումից առաջ	Համայնքի անվանումը խոշորացումից հետո	Նշումներ
1415 741520		անշարժ գույք				
		փոխադրամիջոց				
		հողամաս				

(դրամ)

Հողի օտարում	Աճուրդի նախավճարը	Հողի կադաստրա-յին արժեքը	Պայմանագրով սահմանված արժեքը	Հաշվետու տարում վճարված	Վճարման ամսաթիվը (յուրաքանչյուր վճարման համար)	Վճարումը հավաստող փաստա-թղթի համարը	Գերավճարի կամ ապառքի մնացորդը հաշվետու տարվա վերջի դրությամբ	Համայնքի անվանումը խոշորացումից առաջ	Համայնքի անվանումը խոշորացումից հետո	Նշումներ
Հողի օտարում										
Հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերության վճարում	x	x	x							
	x	x	x							
	x	x	x							
	x	x	x							
	x	x	x							

(դրամ)

Սոցիալ-տնտեսական ներդրում	Վճարված գումարը		Վճարման ամսաթիվը (յուրաքանչյուր վճարման համար)	Վճարումը հավաստող փաստաթղթի համարը	Ոչ ֆինանսա-կանի դեպքում՝ ապրանքը կամ ծառայությունը	Համայնքի անվանումը խոշորացումից առաջ	Համայնքի անվանումը խոշորացումից հետո	Նշումներ
	համայնքի բյուջե	համայնքի արտաբյուջետային հաշիվ						
Ընդերքօգտագործողի կողմից հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունների կատարման վճարներ					x			
					x			
					x			
	x	x	x	x				
	x	x	x	x				
	x	x	x	x				

(դրամ)

ԿՖՎ 2001 ծածկագիրը	Տույժեր և տուգանքներ	Ինչ իրավախախտման համար է նշանակվել տույժը կամ տուգանքը	Հաշվարկված տույժի և տուգանքի գումարը (ներառյալ տվյալ տարում ստուգման ակտով (ուսումնասիրության արձանագրությամբ) հաշվարկված)	Ստուգման ակտի (ուսումնասիրության արձանագրության) ամսաթիվը	Ստուգման ակտի (ուսումնասիրության արձանագրության) համարը	Հաշվետու տարում վճարված	Հաշվի համարը	Վճարման ամսաթիվը (յուրաքանչյուր վճարման համար)	Վճարումը հավաստող փաստաթղթի համարը	Համայնքի անվանումը խոշորացումից առաջ	Համայնքի անվանումը խոշորացումից հետո	Նշումներ
1431 743120, 1161 716122	Տույժեր											
1431 743120 1161 716122	Տուգանքներ											

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Համայնքների ղեկավարները լրացնում են հրապարակային հաշվետվությունն ու ուղարկում են տարածքային կառավարման և զարգացման նախարարության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին «պդֆ» («pdf») ձևաչափով՝ համապատասխան համայնքի ղեկավարի ստորագրությամբ:

2. Համայնքի ղեկավարը հրապարակային հաշվետվությունն ուղարկում է նաև «էքսելս» («xls») ձևաչափով (առանց ստորագրության, չլուսածրված) տարածքային կառավարման և զարգացման նախարարության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

3. Համայնքի ղեկավարի կողմից հրապարակային հաշվետվությունը լրացվում է համայնքում հաշվետու տարվա ընթացքում հաշվետվության մեջ ներառված ֆինանսական հոսքեր ապահոված յուրաքանչյուր ընդերքօգտագործողի համար առանձին:

4. Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը 15-օրյա ժամկետում համայնքների հրապարակային հաշվետվություններն առանց փոփոխությունների մուտքագրում է հրապարակային հաշվետվությունները ներկայացնելու էլեկտրոնային համակարգում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 666 - Ն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգով: Համակարգում լրացված հաշվետվությունը ներկայացնելուց առաջ տարածքային կառավարման և զարգացման նախարարության օգտվողը կցում է համայնքի (բնակավայրի) ղեկավարի ստորագրությամբ համայնքի (բնակավայրի) կողմից ուղարկված համապատասխան «պդֆ» («pdf») ձևաչափով հաշվետվությունը, դնում է իր էլեկտրոնային ստորագրությունը և ուղարկում է հաշվետվությունը:

5. «Հարկ վճարողի անվանումը» տողերում լրացվում է ընդերքօգտագործող հարկ վճարողի անունը հայերենով և անգլերենով:

6. «Գույքահարկ» և «Հողի հարկ» տողերում լրացվում են՝

1) հաշվարկված գումարը՝ ըստ հաշվետու տարվա համար ներկայացված յուրաքանչյուր հարկային հաշվարկի (ճշգրտված հաշվարկի).

2) հաշվետու տարվա համար ներկայացված յուրաքանչյուր հարկային հաշվարկը (ճշգրտված հաշվարկի) ներկայացնելու ամսաթիվը.

3) հաշվետու տարում ստուգման ակտով (ակտերով) (ուսումնասիրության արձանագրությամբ) արձանագրված (առաջադրված) ընդամենը գումարը՝ առանց տույժերի և տուգանքների.

4) հաշվետու տարում ընդամենը վճարված գումարը՝ առանց տույժերի և տուգանքների.

5) գերավճարի կամ ապառքի մնացորդը՝ հաշվետու տարվա վերջի դրությամբ.

6) համայնքի անվանումը (անվանումները) համայնքների խոշորացումից առաջ, եթե իրականացվել է համայնքների խոշորացում.

7) համայնքի անվանումը համայնքների խոշորացումից հետո, իսկ եթե համայնքի խոշորացում չի իրականացվել, երկու դաշտում էլ լրացվում է համայնքի նույն անվանումը.

8) «Նշումներ» դաշտում համայնքը կատարում է գրառում տվյալ հարկի վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

7. «Հողի օտարում» տողում լրացվում է՝ ըստ յուրաքանչյուր հողամասի՝

1) համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդով վաճառելու դեպքում աճուրդի նախավճարը.

2) հողամասի կադաստրային արժեքը.

3) պայմանագրով սահմանված ձեռքբերման արժեքը.

4) հաշվետու տարում ընդամենը վճարված գումարը.

5) հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերության համայնքին վճարված գումարը.

6) յուրաքանչյուր վճարման ամսաթիվը.

7) համապատասխան վճարումը հավաստող փաստաթղթի համարը.

8) գերավճարի կամ ապառքի մնացորդը՝ հաշվետու տարվա վերջի դրությամբ.

9) համայնքի անվանումը (անվանումները) համայնքների խոշորացումից առաջ, եթե իրականացվել է համայնքների խոշորացում.

10) համայնքի անվանումը համայնքների խոշորացումից հետո, իսկ եթե համայնքի խոշորացում չի իրականացվել, երկու դաշտում էլ լրացվում է համայնքի նույն անվանումը.

11) «Նշումներ» դաշտում համայնքը կատարում է գրառում տվյալ վճարի վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

8. Համայնքին վճարված վարձակալության վճարները ներկայացվում են՝ ըստ վարձակալության օբյեկտների, որոնք են՝ վարձակալած անշարժ գույքը, փոխադրամիջոցները և (կամ) հողամասը, յուրաքանչյուր ընդերքօգտագործողի համար: «Վարձակալության վճարներ» տողում լրացվում են՝

1) վարձակալության օբյեկտը (անշարժ գույքը, փոխադրամիջոցը և (կամ) հողամասը).

2) հաշվետու տարում ընդամենը վճարված գումարը.

3) համայնքի (բնակավայրի) անվանումը համայնքների խոշորացումից առաջ, եթե իրականացվել է համայնքների խոշորացում.

4) համայնքի անվանումը համայնքների խոշորացումից հետո, իսկ եթե համայնքի խոշորացում չի իրականացվել, երկու դաշտում էլ լրացվում է համայնքի նույն անվանումը.

5) «Նշումներ» դաշտում համայնքը կատարում է գրառում տվյալ վճարի վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

9. «Ընդերքօգտագործողի կողմից հանքարդյունահանման պայմանագրով սահմանված՝ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունների կատարման վճարներ և համայնքին կատարած բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումներ» տողում լրացվում են՝

1) պարտավորության (ներդրման) անվանումը.

2) դրամային արտահայտությամբ ներդրման դեպքում՝ հաշվետու տարում ներդրված գումարը՝ նշելով, թե որ հաշվին է կատարվել վճարումը (համայնքի բյուջեի կամ համայնքի արտաբյուջետային հաշիվ).

3) յուրաքանչյուր վճարման ամսաթիվը.

4) համապատասխան վճարումը հավաստող փաստաթղթի համարը.

5) ոչ ֆինանսական ներդրման դեպքում՝ ապրանքի և (կամ) ծառայության անվանումը.

6) համայնքի անվանումը համայնքների խոշորացումից առաջ.

7) համայնքի անվանումը համայնքների խոշորացումից հետո, իսկ եթե համայնքի խոշորացում չի իրականացվել, երկու դաշտում էլ լրացվում է համայնքի նույն անվանումը.

8) «Նշումներ» դաշտում կատարվում է գրառում ցանկացած էական տեղեկատվության, ինչպես նաև կատարված ներդրումների մասին հրապարակային աղբյուրների վերաբերյալ.

9) հաշվետվությանը կից՝ կարող են ներկայացվել կամ համակարգում վերբեռնվել նաև ներդրման մասին վկայող փաստաթղթեր:

10. «Տույժեր» և «Տուգանքներ» տողերում լրացվում են հրապարակային հաշվետվությունում ներառված հարկերի և վճարների վճարման պարտավորությունները չկատարելու դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն լիազոր մարմինների կողմից նշանակված տույժերն ու տուգանքները: «Տույժեր» և «Տուգանքներ» տողերում լրացվում են՝

1) իրավախախտման անվանումը, որի համար նշանակվել է տույժը և (կամ) տուգանքը.

2) հաշվետու տարում հաշվարկված տույժը և (կամ) տուգանքը.

3) ստուգման ակտի (ուսումնասիրության արձանագրության) համարը և ամսաթիվը.

4) համապատասխան հաշիվներին հաշվետու տարում տույժի և (կամ) տուգանքի վճարված գումարը.

5) հաշվի համարը.

6) յուրաքանչյուր վճարման ամսաթիվը.

7) համապատասխան վճարումը հավաստող փաստաթղթի համարը.

8) համայնքի անվանումը համայնքների խոշորացումից առաջ.

9) համայնքի անվանումը համայնքների խոշորացումից հետո, իսկ եթե համայնքի խոշորացում չի իրականացվել, երկու դաշտում էլ լրացվում է համայնքի նույն անվանումը.

10) «Նշումներ» դաշտում կատարվում է գրառում տույժերի և տուգանքների վերաբերյալ ցանկացած էական տեղեկատվության վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2018 թվականի
հունիսի 8-ի N 666 - Ն որոշման

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում են էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից իր պաշտոնական ինտերնետային կայքում օգտակար հանածոյի արդյունահանման և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվության հրապարակման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունն իր պաշտոնական ինտերնետային կայքում Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օգտակար հանածոյի արդյունահանման և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը (այսուհետ՝ տեղեկատվություն) հրապարակում է «էքսելս» («xls») ձևաչափով՝ համաձայն ձևի, ընդերքօգտագործման իրավունք (օգտակար հանածոյի արդյունահանման և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն) ունեցող բոլոր կազմակերպությունների համար:

3. Մետաղական օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները հրապարակվում են «պդֆ» («pdf») ձևաչափով՝ բացառելով «Տեղեկատվության

ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկությունների հրապարակումը:

4. Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից իր պաշտոնական ինտերնետային կայքում տեղեկատվության և պայմանագրերում կատարվող փոփոխությունները հրապարակվում են փոփոխությունների իրականացումից հետո՝ տասնօրյա ժամկետում:

5. Տեղեկատվության մեջ և պայմանագրերում յուրաքանչյուր փոփոխության հրապարակման հետ միաժամանակ պետք է ապահովվի նախկինում պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվության և պայմանագրերի հասանելիությունը:

Ձև

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկատվության լրացման ամսաթիվը՝	

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվություն																	
NN ը/կ	թույլտվություն ստացած իրավաբանական անձի անվանումը	թույլտվություն ստանալու համար ներկայացված դիմումի տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	թույլտվության			օգտակար հանածոյի երևակման կամ օբյեկտի անվանումը	ընդերքի տեղամասի		օգտակար հանածոյի անվանումը	ընդերքօգտագործման պայմանագրի՝		ընդերքօգտագործման պայմանագրում փոփոխություններ կատարելու դեպքում՝		թույլտվության երկարաձգման դեպքում՝		
			հերթական համարը	տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	ժամկետը		ծայրակետերի կոորդինատները	ընդհանուր մակերեսը		համարը	կնքման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	յուրաքանչյուր փոփոխության համար համապատասխան փաստաթղթի համարը	յուրաքանչյուր փոփոխության համար համապատասխան փաստաթղթի կնքման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	երկարացման փաստաթղթի համարը	երկարացման փաստաթուղթը տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	երկարաձգման ժամկետը
1.																
2.																

Տեղեկատվության լրացման ամսաթիվը՝	

Օգտակար հանածոների արդյունահանման մասով գործունեության վերաբերյալ տեղեկատվություն																							
NN ը/կ	թույլտվություն ստացած իրավաբանական անձի անվանումը	թույլտվություն ստանալու համար ներկայացված դիմումի տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	թույլտվության			հանքավայրի (տեղամասի) անվանումը	ընդերքի տեղամասի		օգտակար հանածոյի անվանումը	տրամադրված օգտակար հանածոյի մարվող պաշարների քանակը՝				հանքի տարեկան արտադրողականությունը	ընդերքօգտագործման պայմանագրի՝		ընդերքօգտագործման պայմանագրում փոփոխություններ կատարելու դեպքում՝		թույլտվության երկարաձգման դեպքում՝		
			հերթական համարը	տպու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	ժամկետը		ծայրակետերի կոորդինատները	ընդհանուր մակերեսը		հիմնական բաղադրիչը (բաղադրիչները)	քանակը	ուղեկից բաղադրիչը (բաղադրիչները)	քանակը		համարը	կնքման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	յուրաքանչյուր փոփոխության համար համապատասխան փաստաթղթի համարը	յուրաքանչյուր փոփոխության համար համապատասխան փաստաթղթի կնքման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	երկարացման փաստաթղթի համարը	երկարացման տպու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	երկարաձգման ժամկետը
1.																							
2.																							

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ